ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՎՆԱՍՈՒԱԾՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿՈՄԻՏԷՏԻ

ԿՈՉԸ

Կովկասի բնակիչներ,

Ողջ անօրինակ բարձրացումը թևաւորուած տարածւում է լայնածաւալ Ռուսաստանի վրայով։ Կապուած միանձն հոգով, հոգու միևնոյն բռնկմամբ՝ Ռուսաստանի ժողովուրդները ահեղօրէն ոտքի ելան Թագաւոր Կայսեր կոչից՝ պաշտպանելու հայրենիքը և նրա պատիւը թշնամիներից, որոնք սուր են բարձրացրել իրանց դէմ։

Մեր հայրերը, ամուսինները, եղբայրները և զաւակները, մեր հայրենիքի զարդը, ամենն ուժեղը և լաւագոյնը զէնքը ձեռքին դուրս է եկել յետ մղելու թշնամիներին և յաղթելու նրանց։ Իսկ մենք, քաղաքացիներս, որ տանն ենք մնացել, սիրով և գթութեամբ միաւորուած նոյնպէս պիտի ելնենք, որպէս մի մարդ, որպէսզի թեթևացնենք պատերազմի աղէտները։ Մեր պարտքը, մեր պարտականութիւնն է հոգ տանել թէ վիրաւոր և թէ հիւանդ զինուորների մասին և թէ նրանց՝ տանը մնացած՝ ընտանիքների մասին։ Այդ բոլոր կարիքները անսահման բազմազան են և պահանջում են հսկայական միջոցներ և անձնական զոհաբերութիւններ։

Պատերազմի ներկայ պայմաններում վիրաւորուածների քանակը հսկայական կարող է լինել. կառավարչական բոլոր հիմնարկութիւնների և կարմիր Խաչի միջոցները չեն զոհացնի բոլոր վիրաւորներին։

Պատերազմի բեմից վիրաւորներին առանձնացնելու համար անհրաժեշտ է կառուցանել միանգամայն կահաւորուած հիւանդանոցներ և լազարէթներ այն վայրերում, որոնք հեռու են պատերազմի գաշտից. ապաքինուողների և քրոնիկական հիւանդութեամբ բռնուածների համար անհրաժեշտ են սանատորիաներ, որոնց կառուցումը Կովկասի համապատասխան վայրերում առանձնապէս կարևոր է։

Զէնքի կոչուածների ընտանիքներին խնամելու վերաբերմամբ թէև կառավարութիւնը յանձն է առել ապրուստի միջոցներ մատակարարելու հոգը. սակայն սահմանուած չափերը հնարաւորութիւն են տալիս հայթայթելու միմիայն մնունդը։ Անհրաժեշտ է

լրացուցիչ օգնություն այդ ընտանիքների կարիքների համար, հայթայթելով նրանց հագուստեղէն, իսկ անհրաժեշտ դէպքերում և ապաստարան։ Այն երեխաների համար, որոնք զրկուած են ծնողներից, հարկաւոր են ապաստարաններ, որպէսզի աշխատելու հնարաւորություն տրուի մայրերին, անհրաժեշտ են ցերեկուայ ապաստարաններ, ճաշարաններ. անհրաժեշտ է վճարել երեխաների ուսման վարձը, հասցնել նրանց հագուստ և այլն և այլն։ Գիւղական վայրերում, ուր զգացւում է աշխատող ձեռքերի պակասություն, հարկաւոր են կազմակերպություններ բերքը հաւաքելու. թէ քաղաքներում և թէ գիւղերում պէտք է հոգ տանել մթերքների, վառելափայտի և վառելանիւթի ներմուծման մասին և այլն։

Այս բոլոր՝ պատերազմի հետ կապուած՝ կարիքներին դոհացում տալու համար, Կովկասում քաղ. ինքնավարությունների և հասարակական ու մասնաւոր կազմակերպությունների նախաձեռնությամբ արդէն հիմնուել են և շարունակում են հիմնուել օգնության զանազան կոմիտէներ։ Այս բոլոր կառավարչական, հասարակական և մասնաւոր ձեռնարկությունները միացնելու և նրանց գործը թեթևացնելու համար Կովկասեան Փոխարքայի կարգադրությամբ կազմուել է պատերազմից ՀԱՍԱՐԱԿԱՆ ՕԳՆՈՂ ԿՈՄԻՏԷՏ, որի նպատակն է, ընդ. չը նեղելով հասարակական և մասնաւոր նախաձեռնությունը և գործունէությունը, աջակցություն ցոյց տալ նրանց թէ դրամական միջոցներով այն գումարների սահմանում, որ կը ստանայ Կոմիտէտը իբրև նուիրատուություն, և թէ այդ կազմակերպություններին նիւթեր, բժշկական պարագաներ և մթերքներ մատակարարելով։

Այդ նպատակով Կոմիտէտը իր տեղական անդամ-ներկայացուցիչների միջոցով ցուցակագրում է հասարակական կազմակերպությունները, որոնք յանձն են առել օգնության նախաձեռնությունը. և հաւաքում է տեղեկություններ այն մասին, թէ որպիսի օգնություն է ցոյց տալի իւրաքանչիւր տուեալ կազմակերպություն։ Միևնոյն ժամանակ Կոմիտէտը այդ կազմակերպությունների կամ մասնաւոր անձանց խնդիրքով բանակցություններ է վարելու բոլոր վարչական հիմնարկությունների հետ, բոլոր այն հարցերի վերաբերմամբ, որոնք կապուած են պատերազմից ՀԱՍԱՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ հասցնելու, և աջակցելու նրանց փութաջոյն լուծման։

Այն դէպքերում, երբ Կովկասի առանձին վայրերում չը ձեռնարկուեն օգնության այն տեսակները, որոնք տեղական պայմանների համաձայն անհրաժեշտ պիտի նկատուեն, Կոմիտէտը հոգալու է համապատասխան վայրերում կոմիտէտներ բանալը և օգնություն հասցնելը։

Առաջադրուած նպատակները իրագործելու համար Գատե-

բազմից վնասուածներին Օգնող Կովկասեան Կոմիտէտը իր պատուաւոր նախագահ Ն. Կ. Մ. Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի անունից դիմում է համայն Կովկասի ազգաբնակութեան, խնդրելով իրանց լուման յատկացնել պատերազմից ցնաասուածներին օգնութիւն հասցնելու գործին։

Կոմիտէտը հաւատացած է, որ Կովկասը, մանաւանդ իր ունեւոր դասակարգերով, լիակատար պատրաստակամութեամբ արձագանք կը տայ այդ մեծ կոչին և երկրի առատ նուիրատուութիւնները ցնծութեամբ կարձագանքուեն Կովկասցի կուռողների սրտերում, հաւատիութիւն տալով նրանց, որ վիրաւորուելու և հիւանդանալու պարագայում մայրենի երկիրը կը ստեղծէ նրանց համար խնամք և ապաստան, իսկ տանը մնացած ընտանիքը կապահովուեցնի և կը պատէ խնամքով ու սիրով։

Կոմիտէտի կազմը.—Պատուաւոր նախագահ՝ Ն. Կ. Մ. Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկով, նախագահուհի՝ ստատս դամա կոմսուհի Ե. Ա. Վորոնցովա-Դաշկովա, փոխ-նախագահ՝ Պետրոս արքեպիսկոպոս—Վրաստանի էկզարխ։ Անդամներ՝ գեներալ Միշլայեվսկի, Մեսրոպ եպիսկոպոս, հոգմէյստէր Ն. Լ. Պետերսոն, տիկ. Ա. Ն. Միշլայեվսկայա, տիկ. Ա. Պ. Պետերսոն, գեներալ Ն. Ն. Իւդէնիչ, եգերմէյստէր Ն. Ֆ. Ջունկովսկի, նահանգապետ Ի. Մ. Ստրախովսկի, ազնուականութեան պարագլուխ իշխ. Կ. Ն. Աբխազի, բժ. Ղեխոնէր. անդրկովկասեան Մուֆթի և Շեյխ-ուլ-իսլամ։ Կոմիտէտի գործերը կառավարող Ալէքսանդր Ալէքսէյեվիչ Պաւլով (Պետ. ազգ. բանկի բաժանմունք, Головинскій пр. д. № 19, տելեֆոն 6—53)։ Կոմիտէտի գանձապահ՝ Թիֆլիսի Առևտրական բանկի դիրեկտոր Գ. Մ. Ծուրինեան (Թիֆլիսի Առևտրական բանկ, Штабная, 4, տելեֆոն 1—92 և 6—48)։ Կոմիտէտի՝ Փոխարքայի պալատում գտնուող պահեստի կառավարիչ՝ Իվան Պաւլովիչ Բարանով։

Դրամական նուիրատուութիւնները խնդրում է ուղարկել պատուաւոր նախագահի, նախագահուհու, փոխ-նախագահի, կոմիտէտի անդամների, կոմիտէտի գործերի կառավարչի և գանձապահի անունով։ Իրերով նուիրաբերութիւնները խնդրում է յղել Փոխարքայի պալատում գտնվող պահեստը. իրրև նուիրատուութեան իրեր ցանկալի են հետևեալները.—Տղամարդու չգործածված սպիտակեղէն, վերմակներ, բաշլղներ, կտաւ, քաթան, չիթ, շերտինգ, թաշկինակներ. կովկասեան փափուկ եափունջու կտորից կօշիկներ, գուլպաներ։ Իսկ ուտեստի մթերքներից՝ թէյ, շաքար, կօնեակ, կարմիր գինի, կօնսերվներ, գալէտներ, պաքսիմատ, բրինձ, շոկոլադ, կակաո, սապոն, ծխախոտ, պապիրոսներ, բամբակ, փաթաթաններ, ջերմաչափեր և բժշկական պարագաներ։

Բոլոր բանակցութիւնները Կոմիտէտի հետ—պիտի վարուեն Կոմիտէտի գործերի կառավարիչ՝ պետ. ազնուական. հողային բանկի կառավարիչ Ալէքսանդր Ալէքսէյեվիչ Պաւլովի միջոցով (Գոլովինսկի պր. 19), որի անունով խնդրւում է յղել բոլոր նամակագրութիւնները։

ՀԱՇԻ
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՕՆԴԻ*)

		Ռ.	Կ.
200.	Գրոզնի քաղաքի ծխատէր Վարդան քահանայ Տէր Սահակեանի միջոցով թ. 3513 հանգանակութեան թերթով	20	—
202.	Երևանի փոխ-թեմական գերապատիւ Տ. Խորէն եպիսկոպոսի օգոստոսի 15-ի, թ. 1479 յայտարարութեամբ՝ հանգանակուած № 501 թերթով .	4	53
	№ 504 հանգանակութեան թերթով . .	7	20
	№ 508 » » . .	8	50
	№ 519 » » . .	2	—
	№ 538 » » . .	9	10
	№ 572 » » . .	10	12
	№ 577 » » . .	2	60
	№ 581 » » . .	3	—
	№ 582 » » . .	4	40
	№ 583 » » . .	3	15
	№ 585 » » . .	—	96
	№ 586 » » . .	1	40
	№ 593 » » . .	—	75
	№ 598 » » . .	1	—
	№ 599 » » . .	4	30
	№ 603 » » . .	4	08
	№ 608 » » . .	—	20
	№ 611 » » . .	3	—
	№ 615 » » . .	17	90
	№ 616 » » . .	50	—
	№ 649 » » . .	1	02
	№ 675 » » . .	825	—

*) Տես այս տարուայ փետրուար—օգոստոս «Արարատ»։